



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՌՈՒԻՔԻԿ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՏԱՂԵՐԸ

(Մի գլուխ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ» խորագրով ավարտական շարադրությունից):

Նարեկացու տաղերի մեջ երևում է ինքը՝ բնության սիրահար բանաստեղծը: Տաղերը չեն նմանվում հոգևոր շարականներին ո՛չ իրենց բովանդակությամբ և ո՛չ էլ ձևով: Դրանք աշխարհի ուրախությունից կտրված, բնությունից հեռու, անկենդան մտահղացումներ չեն: Մենք այստեղ տեսնում ենք բնությունն իր բազմազան դուլներով, — օդը, ջուրը, ամպն ու երկինքը, թռչուններն ու ծաղիկները, աստղերը, արեգակն ու լուսինը: Նարեկացու վարպետ գրչով այս ամենը իրար հետ շաղկաված են և զարմանալիորեն միահյուսված: Նարեկացու տաղերը մի մի անդին գոհարներ են մեր գրականության հարուստ դանձարանում:



չեն մտել եկեղեցական հոգևոր երգերի (շարականների) կարգը: Տաղերն իրենց բովանդակության տեսակետից ավելի աշխարհիկ բնույթ են ունեցել, դրանց մեջ մեծ մասամբ բնությունն է արտացոլվել ալյարանորեն: Հետագայում, ավելի ուշ շրջանում, «տաղ» ասելով հասկացել են միայն աշխարհիկ բովանդակությամբ հորինված բանաստեղծությունները, քանի որ նրանք միանգամայն դադարում են հոգևոր երգ լինելուց թե՛ ձևի և թե՛ բովանդակության տեսակետից: Օրինակ՝ «Տաղ սիրոյ», «Տաղի վերայ Գիւրջստանայ գողալներին» և այլն: Տաղերի ժողովածուն կոչվել է «տաղարան»: Տաղերը լսողների մեջ առաջ են բերել ուրախ,

լավատեսական, կյանքի և սիրո ապրումներ: Նարեկացու տաղերի կորիզն է հանդիսանում բնությունը, ուր բանաստեղծը հանդես է գալիս իր անհատական զգացմունքով: Նրա ստեղծած պատկերները իրական են և կենդանի: Վերցնենք, օրինակ, նրա տաղերից «Մենդեան մեղեդի» (էջ 376):

Այս բանաստեղծության մեջ մենք հանդիպում ենք բնության մի հույակապ նկարագրության. նոր ծագող արեգակի շողերը առավոտյան լուսավորում են մարգագետնի գույնզգույն ծաղիկները, իսկ երկնքի կենսատու ցողը իջնելով ծաղիկների և թփիկների վրա, գովացնում է նրանց: Ցողը ծնվում է ամպից, որի մեջ շաղ են տրված անձրևի կա-

Բոլոր տաղերն էլ գրված են Նարեկացու երիտասարդական հասակում, «Մատեան ողբերգութեան» պոեմից առաջ: Նախքան նրա տաղերի վերլուծության անցնելը, մի քանի խոսք ասենք՝ թե ի՞նչ է նշանակում «տաղ» և ի՞նչ առումով են գործածել այն հնում: — Հնում «տաղ» կոչվել են այն երկերը, որոնք այս կամ այն սրբի տոնակատարության առթիվ գրվել են և երգվել: Նրանք ունեցել են առանձին եղանակներ և

նրանք ամբողջապես հրատարակված են վենետիկցիների կողմից, «Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրություն» ժողովածուի մեջ, 1827 թվին:

Նարեկացու տաղերի կորիզն է հանդիսանում բնությունը, ուր բանաստեղծը հանդես է գալիս իր անհատական զգացմունքով: Նրա ստեղծած պատկերները իրական են և կենդանի: Վերցնենք, օրինակ, նրա տաղերից «Մենդեան մեղեդի» (էջ 376):

Յիւնեքը, որոնք ցողի ձևով իջնում են երկրի վրա.

«Ի ծոց ծնողին ծագումն անուն,
Յարիւոյն ծագումն եկեալ ի սէր,
Կուսին ծնեալ ծոցոյն ծաղիկ:

Մաղիկ ծոցոյ ծոց հայրենի,
Ամպոյ նման իջեալ յերկնից,
Չսէր իւր ի մեզ քաղցրիկ ցօղեալ:

Սէր ի յամպոյ ամպ սիրաշարժ,
Օդոյն ցօղեալ ի նոյն դեղման,
Վայր իջուցեալ կաթս անձրեաց»:

Յողաբեր ամպի նկարագրութեանից նա անցնում է լիալուսնի նկարագրութեան, որի հետևից հեղիկ ձեմում է «գիշերավար» աստղը (Արուսյակ), հանդերձ «բարկ» «աստեղօք»:

Երկնեանց դարունը հրճվում է՝ Ամբողջ բնութեանը ցնծութեան մեջ է, մի հոյակապ, հրաշալի բնութեան սիմֆոնիա է բացվում ընթերցողի աչքերի առաջ. հեղինակը պարզապես նկարագրել է գեղապաճուճ երկինքը, աստղազարդ գիշերը, լուսինը և այլն: Բանաստեղծութեան մեջ Հիսուսի ծնունդը բնորոշվում է «ծագումն արիւտյն» «փառաց լուսոյ» (որ է այլաբանորեն Քրիստոսի ծնունդը Ս. Կույսի ծոցից, որպես մի գարնան ծաղիկ, կամ ինչպես ցողն է ծնվում գարնան ամպից) մեջբերումներով: Այստեղ հեղինակի ոգևորությունը բարձրանում է և նա հիացած գուշում է.

«Երգ գարմանալի, երգ շարժվարժենի,
Տեղի եղեր Բարեկերտին»:

Հանձարեղ հեղինակն ամեն կերպ աշխատում է ամենագեղեցիկ գուններով ներկայացնելու Հիսուսին:

Իսկ ինչպիսի՞ն է «Բարեկերտ»ի մայրը՝ Աստվածածինը: Աստվածածինը նարեկացու մոտ մի «համերամ խորհուրդ» է, տեղնուտեղը «երամից զարդ», հասակը նոճի, նըշ-դարենի, իսկ հոնքերը՝ նուրբ, իրար կցված կամարներ, կարծես «միջօրէի ժամ»ն է բացվում, իսկ աչքերը՝ ծով:

«Աչքն ծով ի ծով ծիծաղախիտ
Մաւայանայր յառաւօտուն,
Երկու փայլակնաձև արեգական նման,
Շողն ի ժմին իջեալ յառաւօտէ լոյս»:

Գեղեցիկ կույսի մաղիքը «եռահիւսեակ» բոլորվել են նունանման ալտերի երկու կողմերը.

«Մարդիատունկ գեղաշիտակ
Մայրից ծաղկանց,
Որոյ սիւնն ի սրտին, նուախալօրէն
Կարկաջայր սաթերորունի սէր»:

Չեռքերը բռնել է կամարանման.

«Բերանն երկթերթի, վարդն ի շրթանց
կաթլը,
Լեզուին շարժողին քաղցրերգանայր
տաւիղն.

Մոցն լուսափայլ կարմիր վարդով լցեալ,
Մղիքն ծիրանի մանուշակի հոյլք:

Խնկեալ ի կնդրկէ,
Բուրվառ հրով աստուածայնով լցեալ,
Չայն քաղցրանուագ, որ ի նմանէ
հնչէր»:

Բանաստեղծը չի մոռանում ամենայն մանրամասնութեամբ նկարագրելու նաև նրա հագուստները՝ կապույտ, ծիրանի, բեհեղյա պատմուճանը, շափուղա թանկագին քարերով զարդարված կամարակապ, ոսկետուն, արծաթափայլ գոտին.

«Գեղեցիկ պատմուճանան զարդարեալ
էր
Ի կապուտոյ, ի ծիրանոյ, ի բեհեզոյ,
ի յորդանէ:

Գօտին արծաթափայլ ոսկետուն,
Կամարակապ յականց, յականց
շափուղայ,

Մանրամասին յօրինուածով պճնեալ»:

Աստվածածնի գեղեցկութեան սքանչելի պատկերացումից ընթերցողի մոտ դրսևորվում է հեղինակի հոգու ներքին բովանդակութեան կատարելությունը և գեղեցկութեան զգացումը:

Ս. Կույսի նկարագրություններից հետո, նարեկացին անցնում է բնութեան բազմազան նկարագրություններին: Ահա նրա «Տաղ Յարուքեան»ը, որը կարծես շարունակությունն է «Տաղ Մնդեան»ի:

Այստեղ Քրիստոսի Մնդյան առթիւ ավետիս է տրվում բոլորին, ամբողջ տիեզերքին, կարծես ինչ որ ժողովրդական տունախմբություն լինի, ավետիս է տրվում ծառերին, խուռներամ փթթած վարդերին ու ծաղիկներին.

«Աւետիս ծառոց ծաղկանց
Բողբոջախիտ խիտասաղարթ,
Գոյն գեղեցիկ պտղինաւէտ,
Ակնահաճոյ համ քաղցրունակ,
Հոտ բուրաղուարթ, փունջ խուռներամ
Մայրից վարդից փթթինազարդ:
Թերթ տարածեալ ոսկեճաճանչ,
Տերևախիտ կանաչացեալ» (էջ 380):

Անգամ ավետիս է տրվում ջրերին և աղբյուրներին,

«Յորդ աղբերաց, հոյլ վտակաց,
 Զուր մանուածոյ ծիծաղ ծաւալ,
 Կարկաչահոս, ուղխինահոս,
 Մայթինասէր, մանուածաւալ,
 Շրջանապտոյտ մանր աւազին,
 Հոլով խորոտ մէտ մէտ զուգին,
 Վայր վեր անէջ, վեր վայր ի վեր՝
 Փութան ի ջուրս Յորդանանու» (էջ 381):

Այստեղ ջրերի նկարագրութիւնը այնպիսի վարպետ, ռեալիստական գրչով է կատարւած, որ անգամ լավում է կարկաչահոս վտակի բարակ ջրի շիթի ձայնը: Թվում է, թե ջրերի այդ կարկաչը անուշ ծիծաղում է, մանրը ավազի շրջապտույտը, ջրի հոսանքից վետիկտացող ջրերի ուրախ ընթացքը, այս բոլորը կազմում են բնութիւն ներդաշնակութիւնը: Բանաստեղծութեան վարպետը կարողանում է մի տողով, սառը հովից հանդարտիկ ծփացող ծովի սարսուռը հաղորդել ընթերցողին:

«Մաւալ ծով ծիծաղ քաղցր օդով
 շարժենայր»
 (Տաղ եկեղեցւոյ, էջ 385):

Այսպիսով, բնութիւնը Նարեկացու սահուն գրչի տակ վեր է ածվում բանաստեղծական հրաշալի, պատկերավոր, պարզ ու սահուն տողերի: Նարեկացու համար բնութիւնը մի անսպառ, հարուստ գանձարան է, որտեղից բանաստեղծը պիտի օգտվի որքան կարող է: Ուշագրավ է և բավական հետաքրքիր նրա «Յարութեան» գեղեցիկ տաղը:

Այս տաղի մեջ պատկերվում է շքեղ բեհզներով և ծիրանիներով զարդարված մի սայլ, որի վրա դրված ոսկեղեն դահին նստած է «որդին արքայի» (այլաբանորեն՝ Քրիստոս): Աջ ու ձախ կողմերում բազմել են սերովբեներն ու քերովբեները, իսկ գեղեցիկ մանուկները, ձեռքերին քնար և սաղմոսարան, երգում են «Փառք Քրիստոսի յարութեանն»: Այնուհետև սայլը ճոնչալով շարժվում է Մասի աջ կողմից և գալիս մտնում է Երուսաղեմ: Հիմա տեսնենք թե ի՞նչպիսի պատկերավոր երեակալութեամբ է ստեղծել Նարեկացին այս բոլորը (էջ 381—382):

Սկզբում մանրամասն նկարագրում է սայլի վրայի իրերը.

«Եւ ի վերայ նորա աթոռք են կարգելք,
 Եւ ի վերայ նորա գահոյք ոսկեղէնք,
 Եւ ի վերայ նորա բեհեզք ծիրանիք»:

Սակայն սայլի վրա կան նաև որպես զարդարանք (զուցե եզներե կերն է՝)

«Հարիւր բարդ խորձան, վեց կորնկան,
 Մին մանուշակ խրձաղիղեալ»:

Բայց սայլը անշարժ կանգնած է Մասի աջ կողմում.

«Ի մասեաց յաջ կողմանէն
 Սայլիկն ածեալ են կացուցեալ,
 Եւ ահա շարժէր սայլիկն այն,
 Եւ ահա շխաղայր անին այն»:

Եվ քանի դեռ սայլը չի շարժվել իր տեղից, բանաստեղծը սկսում է եզների, սայլի և սայլապանի մանրակրկիտ նկարագրութիւնը: Սայլի՝

«Սամիքն են արծաթի, լուծն էր ոսկի,
 Եւ սամոտիքն ապրիշիմի,
 Փոկեր շարած շարանման հոյլ
 մարգարիտ»:

Իսկ եզները ամբողջովին սաթ ու սպիտակ են.

«Մաղկախայտուցք, արագաքայլք,
 ընթացականք,
 Եղջերն ամէն խաչանման,
 Եւ մազն ամէն հոյլ մարգարիտ»:

Այս ամբողջ նկարագրութեան ժամանակ,

«Չշարժէր սայլիկն այն,
 Չխաղայր անին այն»:

Բայց ահա հանկարծ լավում է «ճոճ», «ճապով», «ռուամիջակ», «հաստարագով», «լայնաթիկունք», «խարտիշապեղ», ճորտ գլուղացու ահեղագոշ ձայնը, նա կանչում է ճեզն ամոլին» և սայլը տեղից պոկվում է, խաղում են անիվները և սայլը հանդարտ իջնում է սարն ի վար.

«Ի գիւ գայր սայլիկն ի գիւ,
 Ի Մասեաց յաջ կողմանէն՝
 Սայլիկն ի գիւ գայր ի գիւ»:

Ամբողջ տաղը մի հոյակապ նկարագրութիւն է թագավորական կամ իշխանական սայլի, կենդանի տոնական թափորի:

Սայլի ամբողջ ընթացքը այնքան բնական ու կենդանի է, որ ընթերցողը բանաստեղծութեան պիթիկ տողերի միջից տեսնում է սայլի գլորվող անիվները և լսում սայլի ճոնչոցը: Ուշագրավ է մի երևույթ, որ Նարեկացին իր սրեգիայի նյութ է դարձրել առաջին անգամ հայ ճորտ, շինական գլուղացուն, որը նկարագրված է առնական գծերով, նկարագրված է իր առօրյա աշխատանքի ժամին, իր սայլը քշելիս: Նարեկացու մոտ բնութեան անշարժ, քարացած պատկերը չէ որ արտացոլվում է, ընդհակառակը՝ նա իր նկարագրում է:

գրութեամբ բնութիւնը դնում է շարժման մեջ. ջուրը կարկաշում է, սայլը և եզները շարժվում են, գլուխացին գոշում է, քամին սվսվում է, անդամ ստիպում է քայլել Ս. Կուլսին, և այդ քայլվածքի մեջ արտահայտւում է նրա կանացի ողջ հրապուրչը:

Բնութիւնի գույների ամենանրբին երանգն անգամ չի մոռացված, մենք տեսնում ենք ոչ թե լոկ մի լուսանկարչական պատճենահանում, այլ արվեստագետ նկարչի գունազեղ մեծ կտավը, որտեղ կա շարժում և կյանք:

Նարեկացու երիտասարդական շրջանի լավատես տրամադրութիւնների արդշունքն է նրա Հարության մի այլ տաղը՝ «Մեղեդի Յարութեան»: Այս տաղի մեջ այլաբանորեն պատկերված է Քրիստոսը, որն իջնում է դոխք և սանդարամետի ձեռքից ազատում է սատանայի գերջալնեբին: Բանաստեղծի երեւակալութիւնն այստեղ ևս բնական գեղեցիկ համեմատութիւն է ստեղծել: Քրիստոսին պատկերել է հզոր առյուծի կերպարանքով, որը մոնչում է խաչի վրայից և նրա սահել մոնչոցից դղրում, սասանում է ողջ սանդարամետը:

«Ես ձայն դառնումն ասեմ,
Որ գոչէր ի քառաթևին,
Ի քառաթևին գոչէր,
Ձայն առնէր ի սանդարամետսն.
Սանդարամետսն այն գող եղեալ,
Սասանէր ի ձայնէն ահեղ» (էջ 382):

Այնուհետև նա քանդում է դոխքի ամբու-
թիւնները և ազատում գերջալնեբին.

«Գերեացն երանի ասեմ՝
Որ եղեն ի յառն առիժուն,
Ի յառն առիժուն եղեն՝
Այլ շունին ակն տանջելու» (էջ 383):

Բանաստեղծի այս նախնական շրջանի բանաստեղծութեան մեջ դեռ սատանայի չարի մարմնացման էական գծերը չեն խտացված և տիպականացված, նրանք իրենց հետագա զարգացումն ու խորացումն են ստանում «Մատեան ողբերգութեան» պոեմում: Այստեղ սակայն կարևորն այն է, որ հեղինակի «պտիմիզմն է գրսևորվում, սատանան չէ որ հաղթում է մարդուն, այլ Քրիստոսը, որը փշրում է սատանայի կապանքները: Նշանակում է՝ վերջ ի վերջո շարի դեմ հաղթանակը տանում է բարին, գեղեցիկը:

Սոցիալական փոխհարաբերութիւնների փոփոխման հետ զուգընթացաբար փոխվում է նաև հեղինակի աշխարհայացքը: Նարեկացին, տեսնելով, որ աշխարհը շար է, որ անի-

լավութիւնն ավելի շատ է քան բարեգործութիւնը, որ մարդկային և ոչ մի օգնութիւն չի կարող սփոփել այն մեծ վիշտը, որ կուտակված է իր տառապած հոգում, որոշում է փախչել, վերանալ աշխարհի տառապանքից ու հոգսերից: Նրա այսպիսի մտորումները գրսևորվում են «Մատեան ողբերգութեան» պոեմի մեջ: Այստեղ արդեն հաճախ շարը «սատանան», հաղթանակներ է տանում բարու դեմ, սատանայի դայթաղայնների թիվը շատանում է, այս արդեն հեղինակի հոռետեսութեան ցայտուն արտահայտութիւնն է, որ գրսևորված է պոեմի մեջ: Նույնպիսի հմուտ արվեստով և զուտ վերածննդի շունչով է գրված նրա «Տաղ Վարդավառի»: Այս տաղի վերնագիրն ու վերջին երկու տողերն են, որ հիշեցնում են ինչ որ կրոնական բան, իսկ տաղի ամբողջ բովանդակութիւնը՝ բնութեան հրաշալի պատկերումն է:

Այստեղ եկեղեցական-կրոնական դոմա-վորման նշույլ անգամ չկա: Վերնագիրը, քրիստոնեական իմաստով, չի համապատասխանում բովանդակութեանը, իսկ հեթանոսական առումով՝ ամբողջովին համապատասխանում է: Վարդավառ անունը, ինչպես դիտենք, մնացել է հին հեթանոսական շրջանից — երբ Գրիգոր Լուսավորիչը քրիստոնեութիւն հաստատեց Հայաստանում, նա միեւնույն ժամանակ հեթանոսական տոները (որոնցից ժողովրդին բաժանելը շատ դժվար էր) հարմարեցրեց քրիստոնեական տոներին: Այդպես էլ Վարդավառի հեթանոսական տոնակատարութեանը, որը նվիրված էր սիրո և գեղեցկութեան հեթանոսական աստվածուհի Աստղիկին, հարմարեցրեց Քրիստոսի պայծառակերպութեան տոնը: Սակայն ժողովուրդը, ըստ հին տրագիցիայի, տոնախմբութիւն էր սարքում Վարդավառի տոնի առթիւ: Վարդավառի տոնակատարութեան ժամանակ մարդիկ ուրախանում էին բաղմազան ձևերով՝ իրար վրա ջուր էին սրկում, դիցուհու պատվին վարդեր էին տարածում, աղայնիներ թոցնում և ուրիշ մեծամեծ հանդեսներով նշանավորում էին այդ մեծ տոնը: Եվ ահա նարեկացին իր տաղի մեջ նկատի ունի ժողովրդրդական այդ տոնախմբութիւնը: Վարդավառի տաղի մեջ բանաստեղծական հոյակապ շնչով նկարագրված է գարնան կանաչագեղ բնութիւնը: Բնութիւնը իր դարթունքն է ապրում ձմեռային խորը քնից հետո՝ սոսիի և տոսախի ծառերը վարդագույն ոստեր են արձակել: Արևի կենսատու շողերի ներքո ծաղկավում է ծովածաղիկը, իսկ գույնզգույն ծաղիկների մեջ պճնվել են վարդն ու շուշանը, և նույնիսկ, սկսել են հասնել պտուղներ:

բը, վառվում է կարմիր վարդը, իսկ շուշանը
շողում է «դէմ արեգական»: Մաղկող ու փըթ-
թող գարունը անուշաբույր բուրմունք է տա-
րածում իր շորս կողմը:

«Գոհար վարդն վառ առեալ
ի վեհից վարսիցն արփենից:
ի վեր ի վերայ վարսից
Մաւալէր ծաղիկ ծովային:

Ի համատարած ծովէն
Պղպշէր գոյնն այն ծաղկին,
Երփին երփնունակ ծաղկին
Շողշողէր պտուղն ի ճղին:

Քրքում վակասիր պտուղն,
Մնանէր խուռն տերևով:

Ի փունջ խուռներամ վարդից
Գոյնզգոյն ծաղկունք ծաղկեցան:
Այդ սօս ու տօսախ ծառերդ
Վարդագոյն ոսոս արծակեցին:
Այդ նոճ ու բողբոջ արօսդ,
Ջարդ առեալ վարդն շուշանին.
Շուշանն շողէր հովտին,
Շողշողէր դէմ արեգականն»

(էջ 384—385):

Բայց ինչպես միշտ, այնպես էլ այստեղ,
Նարեկացին իր բանաստեղծական տաղանդի
համեմատ չի բավականանում նկարագրու-
թյան այս շահով: Բնությունը կարծես մի
տեսակ աշխուժանում է այս նկարագրության
հաջորդող մյուս տողերում, երբ փշում է
հյուսիսային մեղմ զեփյուռը, ամբողջ օդը
լցված է լեռնային քաղցր ու զով ցողով, այդ
անուշաբույր ցողից երփներանգ ծաղիկներն
ու շուշանը մարգարտանման շողով թաթախ-
վում են և շորորում իրենց գլխիկները, ցողը
ծնունդ է գարնան ամպին, իսկ ամպն՝ արե-
գակի:

Բայց արդեն երեկո է: Փոխվում է ամբողջ
բնությունը, երկնակամարում գունդ-գունդ
լուսնի շուրջն են բոլորվել փայլուն աստղերը
և փայլում են մեղմիկ: Խաղաղ լուսնակ գի-
շեր է:

Բնության այդ հրաշագեղ տեսարանները
ահա թե ինչպիսի գունեղ կերպարանք են
առել Նարեկացու գեղեցիկ ոճով:

«Այն հիւսիսային հաւէն,
Հով առեալ գոհար շուշանին,
Յայն հարաւային լեռնէն,
Քաղցր օդով ցօղէր շուշանին,
Շուշանն շաղով լցեալ,
Շող շաղով և շաղ մարգարտով,
Մաղկունքն ամէն շաղ առին,
Շաղն յամպէն, ամպն յարեգակէն,
Աստեղքն ամէն շուրջ առին,
Դէմ լուսնին գունդ գունդ բոլորին,
Գունդ գունդ խաշաձև գնդակ,
Յօրինուած երկնից շրջանակ»:

Բանաստեղծն այստեղ ոչ միայն ունի բնու-
թյունը ճանաչելու լավագույն զգացում, այլև
հրապուրիչ արվեստ, այնպես որ նրա գրած
տողերը մի անգամ կարդացողը նորից ու
նորից կարդալ է ցանկանում:

Նարեկացին առաջինն է, որ հայ հեթանո-
սական շրջանի, ինչպես և սիրո գովերգումը
բանաստեղծության նյութ դարձրեց:

Սակայն Նարեկացու մոտ մի քանի տեղ
տաղերի մեջ հանդիպում ենք կրոնական
թափանցիկ, նուրբ շղարշի, որի տակից իս-
կությունը ամբողջովին երևում է, իսկ շաս-
անգամ նա աղատ ու համարձակ երգում է
բնությունը: Բնությունը Նարեկացու մոտ
դիտվում է իր օրինաչափ զարդացման մեջ:
Տաղերի մեջ ցայտուն կերպով արտահայտ-
վում են Նարեկացու պանթեիստական հա-
յացքները:

Նարեկացու տաղերով սկզբնավորվում է
հայ պոեզիայի վաղ արշալույսը:

